ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների և փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«10» հոկտեմբերի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

Կարեն Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

ՄԻՆՈՆ ՍՊԸ-ի, ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. ՄԻՆՈՆ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում ընկերության գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական,
- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/29» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին ՄԻՆՈՆ ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- 1-ին չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ 1-ին չափաբաժնով նախատեսված՝ Օդորակիչ 9000 BTU-ի մասով հրավերով սահմանված է՝ «Անհրաժեշտ հենակը, մալուխները և խողովակները մինչև 5մ (ըստ անհրաժեշտության) **տրամադրում է Վաճառողը անվճար**:», սակայն ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «Անհրաժեշտ հենակը, մալուխները և խողովակները մինչև 5մ (ըստ անհրաժեշտության) **կտրամադրվի անվճար**:»: Այսինքն՝ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված չէ, թե ում կողմից են ըստ անհրաժեշտության անվճար տրամադրվելու անհրաժեշտ հենակը, մալուխները և մինչև 5մ խողովակները,
- 3-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.2. ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.3. ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության երրորդ նախադասությունում սխալ է նշված ռուսերեն լեզվով ընկերության կազմակերպաիրավական տեսակը,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- 4-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/29» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **ՄԻՆՈՆ ՍՊԸ-ի և ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հոկտեմբերի 11-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Կարեն Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան